ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 23/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի, 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ. նոյեմբերի 27-ի թիվ 17/1 որոշման 2-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2019թ. հունիսի 6-ի թիվ 726-Ն որոշման դրույթներով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Կատարել փոփոխություն և լրացում ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17/1 որոշման 2-րդ մասում.

1. 2-րդ կետում «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերով:
2. 2-րդ կետում «պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում՝ բացառությամբ Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի» բառերը փոխարինել «Տրանսպորտի ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում՝ բացառությամբ շինարարական և «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրերի» բառերով:

3. Լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	5-րդ վարչություն

4. Լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ

	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Տրանսպորտի ոլորտին առնչվող շինարարական ծրագրեր՝ բացառությամբ Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի	5-րդ վարչություն

5. Լրացնել նոր կետերով՝ հետևյալ բովանդակությամբ

	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Պահպանման ծախսեր, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող բյուջետային միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության օգտագործում	5-րդ վարչություն

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ